# ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԹԱՍՐՏՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ...

Մեր պետության մասին հաճախ ասում են բազմազգ պետություն՝ առանց խորանալու այդ հասկացության ներքին բարդության մեջ: Միևնույն պետության սահմաններում ապրում են մի քանի տասնյակ ժողովուրդներ՝ ամեն մեկը իր դեմքով, իր պատմությամբ ու ավանդույթներով, այդ նույն պատմությունից եկած բազմաթիվ կնճռոտ պրոբլեմներով: Ստալինը շատ էր ուզում համահարթել այս բոլոր տարբերությունները, երկաթե բռունցքով ճնշում էր ազգային ինքնատիպության բոլոր արտահայտությունները, չմոռանալով մյուս կողմից շքահանդեսային շղարշ նետել ինչպես ամեն ինչի, այնպես էլ ազգային հարաբերությունների վրա: Այն ժամանակներում սկսվեց վերևից «եղբայրության» (որը հեռու է ժողովուրդների իսկական եղբայրական հարաբերություններից) պրակտիկան: Ծարունակվելով տասնամյակներ, այդ գործելակերպը ունեցավ իր արդյունքները, և մի ժամանակ բոլորը կարծես մոռացան, որ ազգամիջյան նորմալ հարաբերություններ ստեղծելու համար պետք է աշխատել ամեն օր ու ամեն ժամ, առանց իրական դժվարություններն ու բարդությունները վարագուրելու:

50-ական թթ. բավական տարածված մի երգ կար Սումգայիթի մասին, որի մեջ այդ քաղաքը ներկայանում էր իբրև բարեկամության խորհրդանիշ: Պրոպագանդան առհասարակ գործն այդպես էր ներկայացնում, և երևի ոչ մեկի մտքով չէր անցնում, թե ապագան ինչ ահավոր հեգնանք է պահում այդ միամիտ-վարդագույն պատկերացումների նկատմամբ: Սումգայիթը եղավ այն միակ քաղաքը մեր պետության սահմաններում, որտեղ այնքան վայրագ ձևով դրսևորվեցին ազգային անհանդուրժողությունը և ատելությունը, և անմեղ մարդիկ գոհ դարձան 20-րդ դարի վերջին կարծես արդեն մոռացված ստորին բնազդներին: Մեր ժողովրդի գլխին նորից մի պահ փայլատակեց ցեղասպանության ուրվականը, և 1915 թ. եղեռնի զոհերի հուշարձանի կողքին ավելացավ մի համեստ խաչքար 1988 թ. Սումգայիթի զոհերի հիշատակին:

Այս քաղաքը, որ ուզում էին դարձնել բարեկամության խորհրդանիշ, դարձավ ատելության արյունոտ սիմվոլ: Եվ այս կերպափոխությունը այնքան անսպասելի էր, որ շատերը չկարողացան հասկանալ ու երևի մինչև այսօր էլ չեն հասկանում կատարվածի էությունը:

Հիմա ես նորից եմ վերապրում մեկ տարի առաջ մեր ապրած հուզումները: Սկզբից սոսկ չստուգված լուրեր կատարվածի մասին, մամուլի մի անըմբռնելի «անտեղյակություն», այնուհետև՝ ճշմարտության պատառիկներ, և ամբողջական պատկերը մեզ հայտնի դարձավ միայն օրեր, շաբաթներ հետո: Գործեց այն նույն մեխանիզմը, որ մարդկանց գիտակցության մեջ տասնամյակներ շարունակ ներդրել էր ստալինիզմը՝ ճշմարտությունը ոչ թե այն է, ինչ կատարվել է իրականության մեջ, այլ այն, ինչ ասում են չինովնիկները և պրոպագանդայի միջոցները: Բայց չմտածեցին, որ մարդիկ շատ են փոխվել և թերթում գրվածը կամ ռադիոյով ասվածը այլևս չունեն այն կախարդական ազդեցությունը:

Զարժեր, գուցե, հիշել այդ օրերը: Բայց կյանքը այս էլ որերորդ անգամ հիշեցնում է՝ պատմությունը, ներկան, ապագան անխզելիորեն կապված են, և անցյալում կատարվածը անվերջ արձագանքում է այսօր, արձագանքելու է վաղը, և մենք պարտավոր ենք հասկանալ ու գնահատել այն, ինչ տեղի ունեցավ երեկ, որպեսզի այսօր ու վաղը նույն ողբերգությունը չկրկնվի:

Եթե մարդկությունը, Եվրոպան և մյուս պետությունները ժամանակին պարզ ու մեկին ընդունեին հայերի 1915 թ. ցեղասպանությունը և այդ փաստին տային իրավական, քաղաքական ու բարոյական ճիշտ գնահատական, դրանով իսկ եթե ոչ լրիվ կփակեին, գոնե շատ կնեղացնեին ֆաշիստական ջարդարարների ուղին: Ասում են, չէ՞, Հիտլերը իր հրամանները արձակելիս հիշեցնում էր հայերի ցեղասպանությունը՝ ինչպես այն է մոռացվել, այնպես էլ հրեաների և սլավոնների ցեղասպանությունը կմոռացվի:

Բոլոր նրանք, ովքեր անցած ամիսների ընթացքում ստիպում էին խլացնել սումգայիթյան ողբերգության արձագանքները, գուցե և բարի նպատակներ էին հետապնդում՝ թույլ չտալ, որպեսզի ազգային թշնամությունը խորանա: Բայց մենք վաղուց արդեն պետք է հասկացած լինենք, որ նման դեպքերում լավագույն դեղը իրադարձությունների արդար և ճշմարիտ գնահատականն է: Ես չեմ առաջինը ասողը՝ եթե այն օրերին ճշմարիտ ինֆորմացիա տրվեր զոհերի թվի մասին, հրապարակվեին նրանց անունները, պաշտոնական ցավակցություն արտահայտվեր կատարվածի առթիվ, ապա հետագա իրադարձությունները բոլորովին այլ ընթացք կարող էին ունենալ: Այդ միջոցով էր, որ կարելի էր հանդարտեցնել բորբոքված զգացմունքները, ճանապարհ բացելով բարիդրացիական հարաբերությունների վերականգնման համար: Բայց, դժբախտաբար, այս պարզ ճշմարտությունը մի անգամ ևս մոռացվեց: Այդ ամենը առավել ևս ծանր ընկալվեց, երբ Մոսկվայում վերջապես սկսվեց սումգայիթյան մարդասպանների դատավարությունը (որը, հույս ունենանք, դեռ չի ավարտվել, և բոլոր ջարդարարներն ու նրանց ոգևորողները կստանան իրենց արժանի պատիժը), և գոնե հայ լրագրողները կարողացան պատմել ճշմարտությունը փետրվարի վերջին օրերի իրադարձությունների մասին:

Ես հիշում եմ, ինչպես էինք մենք բոլորս սպասում, որ աջդրբեջանական մտավորականությունը իր ցավն ու զայրույթը կարտահայտի կատարվածի առթիվ: Չէ՞ որ մենք հարևաններ ենք անկախ ամեն ինչից և պետք է մնանք հարևաններ: Բայց, դժբախտաբար, ադրբեջանցի գրողներն ու երաժիշտները, գիտնականները այն օրերին չկարողացան ասել մտավորականին վայել խոսքեր: Հետագայում, երբ ես կարդացի մոսկվաբնակ ադրբեջանցի գրող Չինգիզ Հուսեյնովի խոսքերը՝ «Սումգայիթը իմ ժողովրդի խայտառակությունն է», մտածում էի, որ մտավորականին վայել խիզախություն է պետք այսպես ճշմարտության երեսին նայելու համար: Բայց ազգերի միջև իսկապես քաղաքակիրթ հարաբերություններ հաստատելու ուրիշ ճանապարհ չկա: Եվ առանց այդպիսի հարաբերությունների աշխարհում, առավել ևս մի պետության մեջ ապրել անհնար է:

Մեզ համար խորապես ցավալի է, որ Հայաստանում ադրբեջանցիներ սպանվեցին: Մենք իրավունք չունենք այս չասելու: Մարդասպանությունը երբեք պաշտամունք չի եղել մեզ համար՝ Վարդանից մինչև Անդրանիկ:

1988 թվականը մեր պատմության մեջ մտավ ոչ միայն Սումգայիթով, այլև երկրաշարժով: Եվ ոչ Սումգայիթի, ոչ էլ երկրաշարժի պատճառած վերքերը մենք չենք մոռանալու: Բայց երկրաշարժը գոնե ցույց տվեց, որ մարդկության մեջ սումգայիթյան կրքերը տեղի են տալիս իսկական և անկեղծ մարդասիրությանը: Մեր երկրի և աշխարհի բոլոր ծայրերում սկիզբ առած և չնվազող համերաշխության շարժումը 20-րդ դարի ամենազարմանալի երևույթներից մեկն է, այն 20-րդ դարի, որ նշանավորվեց 15 թվականով և հիտլերյան գազախցիկներով: Սումգայիթը նորից սարսռեցնող հստակությամբ հիշեցրեց այդ ամենը: Բայց Հայաստանին օգնության շարժումը մարդկության հետագա ընթացքի մի նոր ուղի ցույց տվեց, որ մերժում է թշնամանքը և ապավինում բարձրագույն բարոյական արժեքներին՝ արդարությանը և գթասրտությանը: Նորից մեզ էր վիճակված, թերևս ողջ մարդկության անունից, այդ ճանապարհին զոհ բերել: Բայց եթե այդպես է, թող մեր զոհերի հիշատակը ավելի անշեղ դարձնի այդ շարժումը, և մենք, մեր վերքերը բուժելով, հնարավորն անենք հանում այդ ընթացքի:

**Ազատ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ**